ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/85

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.06.2018թ. թիվ 03/26-3/10809-18 գրությամբ «Այպոշին» ՍՊԸ-ին և Ա/Ձ Արտյոմ Սարգսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Վանաձորի համայնքապետարանի 08.06.2018թ. թիվ 061/5746 և 13.06.2018թ. թիվ 061/5855 գրությունների հիման վրա, 14.06.2018թ. թիվ 03/26-3/10809-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Այպոշին» ՍՊԸ-ին և Ա/Ձ Արտյոմ Սարգսյանին

(այսուհետ՝ Մասնակիցներ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Այպոշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Այպոշին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/85 ընթացակարգի շրջանակներում 19.06.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>Ա/Ձ Արտյոմ Սարգսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը (այսուհետ՝ նաև Մասնակից) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/85 ընթացակարգի շրջանակներում 19.06.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, և հայտնել է, որ մասնակցել է Վանաձորի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-18/63» ծածկագրով ընթացակարգին և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն, որի մասին ինքը տեղյակ չի եղել և տեղեկանալուն պես անմիջապես մարել է այն:

4. **<u>Վանաձորի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Վանաձորի համայնքապետարանը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.06.2018թ. թիվ 061/5746 գրությամբ հայտնել է, որ Վանաձորի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-18/63» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը, որը հայտը ներկայացրել է համատեղ գործունեության պայմանագրով «Այպոշին» ՍՊԸ-ի հետ, հրավերով սահմանված կարգով ԿԱ ՊԵԿ հարցում ուղարկելուց հետո ստացվել է հարցման պատասխան, որում նշված է, որ Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորություններ, այդ իսկ պատճառով մասնակցի հայտը մերժվել է՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/85 ընթացակարգի շրջանակներում 19.06.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. **<u>ՍՑ-ԱՄ-2018/85 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2018/85 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար Վանաձոր համայնքի Լանջային փողոցում անձրևաջրատար դիտահորի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-18/63» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 29.05.2018թ. հայտ է ներկայացրել Ա/Ձ Արտյոմ Սարգսյանի և «Այպոշին» ՍՊԸ-ի կոնսորցիումը:

2. Մասնակիցները հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել են գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***990 000 ՀՀ դրամ:***

3. Մասնակիցները հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել են, որ բավարարում են «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-18/63» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 04.06.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 40 466 ՀՀ դրամի չափով:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Այպոշին» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում չի ներկայացվել:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Արտյոմ Սարգսյանի և «Այպոշին» ՍՊԸ-ի կոնսորցիումի հայտը մերժվել է:

6. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.06.2018թ. թիվ 03/26-3/10809-18 գրությունը, Վանաձորի համայնքապետարանի 08.06.2018թ. թիվ 061/5746 և 13.06.2018թ. թիվ 061/5855 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ

և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն

զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման

խրոհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար Վանաձոր համայնքի Լանջային փողոցում անձրևաջրատար դիտահորի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-18/63» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 29.05.2018թ. հայտ է ներկայացրել Ա/Ձ Արտյոմ Սարգսյանի և «Այպոշին» ՍՊԸ-ի կոնսորցիումը:

Մասնակիցները հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել են գնային առաջարկ, որի ընդհանուր գինը ***կազմել է 990 000 ՀՀ դրամ:***

Միևնույն ժամանակ Մասնակիցները հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել են, որ բավարարում են «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-18/63» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Արտյոմ Սարգսյանի և «Այպոշին» ՍՊԸ-ի կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 31.05.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե Ա/Ձ Արտյոմ Սարգսյանի վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ

կետի հիման վրա 04.06.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը հայտը ներկայացնելու օրվա՝ 29.05.2018թ. դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 40 466 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Արտյոմ Սարգսյանի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.06.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 40 466 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-18/63» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 04.06.2018թ. տրամադրված եզրակացությունը, գտնում եմ, որ Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-18/63» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Ինչ վերաբերվում է «Այպոշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերին, ապա արձանագրում եմ, որ գործում առկա նյութերի համաձայն՝ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-18/63» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Այպոշին» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում չի ներկայացվել և գործում առկա չէ որևէ տեղեկատվություն Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների խախտման վերաբերյալ, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.06.2018թ. թիվ 04/26-3/10809-18 գրությամբ՝

1. Ա/Ձ Արտյոմ Սարգսյանին (ՀՎՀՀ՝ 66895653) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Արտյոմ Սարգսյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

2. «Այպոշին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06933045) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ